



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2023 թվականի N 137 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-L որոշման 1-ին կետով հաստատված N 8 հավելվածի 19-րդ կետի 18-րդ ենթակետով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմի՝

- 1) քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 1-ի.
- 2) առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 2-ի.
- 3) տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 3-ի.
- 4) կրթության, մշակույթի և սպորտի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 4-ի.
- 5) զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 5-ի.
- 6) գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 6-ի.


7) գորահավաքային նախապատրաստության բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 7-ի.

8) ֆինանսական վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 8-ի.

9) անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 9-ի.

10) իրավաբանական բաժնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված N 10-ի:

29.03.2023

X 

ՂՈՒԿԱՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ռ. ՂՈՒԿԱՅԱՆ

2023թ. մարտի 29
ք. Կապան